

ԱՆՁԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Լիլիթ Ղազանջյան

*ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ*

Պետության և իրավունքի տեսության՝ որպես գիտության համար անկյունաքարային արդիականություն ունեն մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների և օրինական շահեր հասկացությունների ուսումնասիրությունն ու պարզաբանումը: Իրավունքի գրեթե բոլոր ճյուղերում հանդիպող «անձի իրավունքներ և օրինական շահեր» հասկացության մեջ առկա են մի շարք առանձին իրավական խտիտուտներ: Հետևաբար, որպեսզի հասկանանք, թե ինչ է «օրինական շահը», անհրաժեշտ է դիտարկել դրա ծագումը, էությունը, բովանդակությունն ու կառուցվածքային տարրերը:

«Անձի օրինական շահեր» հասկացությունը հասարակական, սոցիալ-իրավական բարդ երևույթ է, որն իր գոյության սկզբից բազմաթիվ մեկնաբանությունների և սահմանումումների տեղիք է տվել: Այսպես, «օրինական շահեր» արտահայտության հիմքում ընկած «շահ» հասկացությունը ուսումնասիրվում է գրեթե բոլոր գիտությունների կողմից (փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավագիտություն և այլն)¹:

Փիլիսոփայությունում «շահ»-ը համարվում է անձնաց և սոցիալական խմբերի գործողությունների, իրադարձությունների, նպատակների իրականացման դրդապատճառ: Տնտեսագիտության մեջ շահեր ասելով հասկանում ենք տնտեսական գործունեության դրդապատճառները, որոնք վերաբերվում են մարդկանց ձգտումներին՝ բավարարելու իրենց նյութական և հեզկոր պահանջմունքները²:

«Շահեր» հասկացությունը իրավաբանությունում նույնպես օժտված է որոշակի առանձնահատկություններով: Այսպես, գերմանացի իրավաբան Ռ. Երինգն առաջինն էր, որ ամբողջությամբ և համակարգված ներկայացրեց շահերի էությունը՝ որպես իրավունքի համակարգում սուբյեկտների սոցիալ-իրավական փոխհարաբերությունների հիմք: Ըստ Ռ. Երինգի՝ հասարակության բոլոր անդամների համար ընդհանուր և սոցիալական փոխհարաբերություններից ծագող շահերը կազմում են իրավունքի բովանդակությունը³:

Հարկ է նշել, որ Գ.Շերշենևիչը, զարգացնելով այդ տեսությունը, իրավագետներից առաջին էր, որ ձևակերպեց «օրինական շահեր» եզրույթը և մանրամասն վերլուծեց այն:

Նրա կարծիքով, օրինական շահերը սուբյեկտի իրավունքների հետ միասին պաշտպանվում են պետության կողմից, իսկ դրանց խախտումը նախ և առաջ արտացոլվում է սուբյեկտի իրավունքում⁴:

¹ Տե՛ս **Михайлов С. В.** Интерес как общенаучная категория и ее отражение в науке гражданского права//Государство и право, 1997, №7, էջ 86:

² Տե՛ս **Азильян А. Н.** Краткий экономический словарь, М., 2002.С..284; Философский энциклопедический словарь/Под ред. **Ильича Л.Ф.**, М., 1983, էջ 23:

³ Տե՛ս **Иеринг Р.** Юридические факты в советском праве. М., 1984, էջ 76-79:

⁴ Տե՛ս **Шершеневич Г. Ф.** Общая теория права.М., 1911, էջ 82-84:

Զնայած այն համգամանքին, որ մարդու, քաղաքացու օրինական շահեր հասկացությունը օրենսդրական ձևակերպում չի ստացել, այնուամենայնիվ իրավաբանական գրականությունում «օրինական շահեր» արտահայտությունը ստանում է տարաբնույթ և տարատեսակ մեկնաբանություններ: Որոշ աշխատություններում այն ներկայանում է որպես «օրենքով թույլատրված՝ սուբյեկտի որոշակի բարիքներ ձեռք բերելու ձգտում», իսկ մյուսներում՝ որպես «օրենքում արտահայտված շահեր», «շահեր, որոնք անմիջական արտահայտում չեն գտել իրավաբանական իրավունքներում և պարտականություններում, սակայն ենթական են պաշտպանության պետության կողմից» և այլն: Այսպես, Ա. Մալկոն իրավագիտերն նշում է, որ օրինական շահը, ինչպես սուբյեկտիվ իրավունքը, օժտված է պետությամբ ընձեռնված և պաշտպանվող իրավական հնարավորություններով: Հետևաբար, որոշակի բարիքներ ունենալու *ձգտումը և այդ բարիքին տիրանալու հնարավորությունը* հիմնական հասկացություններ են, որոնք իրավագետները կապում են օրինական շահերի հետ, որտեղ *«հնարավորություն»* հասկացությունը օրինական շահերի բնութագրիչ հատկանիշ է⁵: Ինչպես նշում է Ն Մատուզովը. «Օրինական շահը իրավաբանական նշանակության շահն է, որը հիմնված է օրինքի վրա, բխում է նրանից, և պաշտպանվում դրանով, չնայած որ ամրագրված չէ կոնկրետ իրավական նորմերում»⁶:

Ուշագրավ է Վ. Սուբաչովի դիրքորոշումը, որի համաձայն՝ «Օրինական շահը սուբյեկտի ձգտումն է օգտվել որոշակի սոցիալական բարիքներից, և որոշ դեպքերում դիմել իրավասու մարմիններին՝ իրավունքի նորմերին չհակասող շահերի պաշտպանության և բավարարման նպատակով, որոնք որոշակիորեն թուլատրվում են պետության կողմից՝ օբյեկտիվ իրավունքում արտահայտված կամ նրա ընդհանուր իմաստից բխող իրավաբանական թույլտվության տեսքով»⁷:

Ըստ Ն. Վ. Վիտրուկի՝ անձի օրինական շահերը իրավաբանորեն ամրագրված նրա հնարավորությունն է՝ բավարարելու այն պահանջումները, որոնք նախատեսված են օբյեկտիվ իրավունքով⁸: Փաստորեն անձի օրինական շահերը հավասարեցվում են սուբյեկտիվ իրավունքներին:

Սենք համաձայն ենք հեղինակի հետ, սակայն որաշակի վերապահումով. անձի օրինական շահերը նրա իրավաբանորեն ամրագրված հնարավորությունն է օգտվելու որոշակի սոցիալական բարիքներից և դրանց պաշտպանության համար դիմելու համապատասխան իրավասու մարմիններին:

Ուշագրավ է այն փաստը, որ արդի պետության և իրավունքի տեսությունում հաճախ նշվում է, որ անձի օրինական շահերը բխում են նրա սուբյեկտիվ իրավունքներից: *Սուբյեկտիվ իրավունքը* պետության կողմից սուբյեկտին տրվող և պահպանվող հնարավորությունն է (ազատություն)՝ ըստ իր հայեցողության բավարարելու այն շահերը, որոնք նախատեսված են օբյեկտիվ իրավունքով⁹: Մեր կարծիքով, սուբյեկտիվ իրավունքի ամրագրումը օրենքում ժողովրդավարության պայմաններում անձի համար ստեղծում է ի-

⁵ Տե՛ս **Малько А. В.** Законные интересы советских граждан. 1990, էջ 59-62:

⁶ **Матузов Н.** Субъективные права граждан СССР. Саратов. 1966, էջ 76; նույնի Правовая система и личность, Саратов, 2003, էջ 80-82:

⁷ **Субачев В. В.** Законные интересы. Норма. М. 2009, էջ 38:

⁸ **Витрук Н. В.** Общая теории правового положения личности. Норма. М., 2008, էջ 148:

⁹ Տե՛ս **Бадирян Г. М.**, Проблематика прав личности в новейшей истории Армении: вопросы теории и практики, Ер., Авт. изд., 2006. С. 103; **Матузов Н. И.**, Теория и практика прав человека в России//Правоведение, 1998, №4, էջ 12:

րական հնարավորություն՝ ազատորեն օգվելու որոշակի բարիքներց, օրենքով անրագրված չափով և սահմաններում:

Արդի պետության և իրավունքի տեսության գիտաճյուղը ուսումնասիրում է անձի իրավաբանական նշանակության շահերը¹⁰: Այսինք՝ սուբյեկտիվ իրավունքներում և իրավաբանական պարտավորություններում (բովանդակությունում մարմնացած) անրագրված շահերից բացի, գոյություն ունեն քաղաքացիների այնպիսի շահեր, որոնք երաշխավորվում և պաշտպանվում (պահպանվում) են պետության կողմից: Ակնհայտ է, որ իրավունքը նպաստում է շահերի ապահովմանը, որոնք իրագործվում են այն ժամանակ, երբ օրենքը որոշակի խումբ անձնաց օժտում է սուբյեկտիվ իրավունքներով, որոնք շահերի իրացման միջոց են հանդիսանում: *Դրա վրա է խարսխված իրավագետներից ոմանց դիրքորոշումն այն մասին, որ օրինական են համարվում այն շահերը, որոնք միջնորդավորված են իրավունքի նորմերում արտահայտված սուբյեկտիվ իրավունքներով և իրավաբանական պարտականություններով*: Մյուսներն էլ համարում են, որ օրինական շահերը ինքնուրույն իրավական երևույթներ են՝ օժտված ուղղակի իրավական նշանակությամբ:

Ընդհանուր առմամբ օրինական շահերի գոյությունը նախ և առաջ անհրաժեշտություն է, քանի որ անձի բազմաբնույթ շահերը միշտ չէ, որ կարող են միջնորդավորված լինել սուբյեկտիվ իրավունքներով և իրավաբանական պարտականություններով: Դա պայմանավորված է դրանց նյութական երաշխավորվածության և իրավական կարգավորման առանձնահատկություններով: Հետևաբար կարող ենք փաստել, որ պետությունը չի կարող յուրաքանչյուր շահ դարձնել իրավունք, քանի որ շահերի բավարարման հնարավորությունները սահմանափակված են տնտեսական և այլ օբյեկտիվ պայմաններով:

Նկատենք, որ սուբյեկտիվ իրավունքի և իրավաբանական պարտականության հիմքում ընկած շահը նույնպես պաշտպանվում է (պահպանվում) պետության կողմից, այդ պատճառով էլ օրինական է: Այնուամենայնիվ անորոշ է մնում այն շահերի պաշտպանության խնդիրը, որոնք միջնորդավորված չեն ո՛չ սուբյեկտիվ իրավունքներով և ո՛չ էլ իրավաբանական պարտականություններով: Այդ պատճառով էլ *Ռ. Ե. Դուկասյանը առաջարկում է անձի՝ օրենքով պաշտպանվող շահերը դիտարկել (օրինական շահերը) լայն և նեղ իմաստներով*¹¹:

Լայն իմաստով, «օրենքով պաշտպանվող շահեր» հասկացությունն ընդգրկում է անձի այն շահերը, որոնք միջնորդավորված են ինչպես սուբյեկտիվ իրավունքներով և իրավաբանական պարտականություններով, այնպես էլ այն շահերը, որոնք չունեն այդպիսի միջնորդավորվածություն: «Օրենքով պաշտպանվող շահեր» հասկացությունը *նեղ իմաստով* ընդգրկում է միայն այն շահերը, որոնք միջնորդավորված չեն սուբյեկտիվ իրավունքներով և իրավաբանական պարտականություններով, սակայն գտնվում են պետության իրավական պաշտպանության ներքո:

Մեր ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն համոզման, որ օրինական շահ

¹⁰ Տե՛ս **Патюлин В. А.** Государство и личность в СССР (правовые аспекты взаимоотношений), էջ 79-122, **Мальцев Г.В.** Социалистическое право и свобода личности (теоретические вопросы), М., 1968., էջ 133-142; **Чечет Д.М.** Субъективное право и формы его защиты. Л., 1989, էջ 35-43; **Гукасян Р. Е.** Проблема интереса в советском гражданском процессуальном праве. Саратов, 1990, էջ 39-47; **Матузов Н. И.** Субъективные права граждан СССР, էջ 215-217; **Малько А. В. Субачев В. В.** Законные интересы как правовая категория. СПб, 2004, էջ 57-58:

¹¹ Տե՛ս **Гукасян Р. Е.** նշվ. աշխ., էջ 36-37:

հերը անձի մոտ ծագում (առաջանում) են միայն հասարակական հարաբերությունների այն ոլորտներում, որոնք ենթական են իրավական կարգավորման: Իրավական պահպանության ոլորտը չի ընդգրկում իրավական նշանություն չունեցող շահերը, այսինքն՝ այն անձնական շահերը, որոնք բխում են առօրյա ընտանեկան, ընկերական հարաբերություններից, և որոնք կարգավորվում են սովորութային, բարոյական նորմերով:

Հետևաբար, անձի տարաբնույթ շահերը համարվում են օրինական այն իմաստով, որ դրանք ընկած են իրավունքի գործողության ոլորտում, և դրանց իրացումը խարսխվում է օրենքի վրա, երաշխավորվորում և պահպանվում է օրենքով:

Որպեսզի շահը ճանաչվի օրինական, այն պետք է համապատասխանի օրենքին (համահունչ չինի օրենքին), իսկ դրա իրացումը չպետք է խախտի իրավունքի նորմերը: Միաժամանակ կարևոր ենք համարում հիշեցնել, որ որպեսզի շահերը դառնան օրինական, պետք է համապատասխանեն ոչ թե իրավունքին, այլ գործող օրենսդրությանը (օրենքում ամրագրված նորմերին):

Մեր կատարած ուսումնասիրությունները վկայում են, որ օրինական շահերի կառուցվածքային տարրերի աստիճանակարգված դասակարգման ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու օրինական շահերի էությունն ու ընդհանուր բնութագիրը: *Օրինական շահը բաղկացած է 2 հիմնական կառուցվածքային տարրերից.*

1) Օրինական շահ, որն ընդգրկում է օրինական շահերի բովանդակության գերակշիռ մասը. *անձի նպատակն է հասնել պահանջմունքների բավարմանը:*

2) Օրինական շահ, որը հիմնված է առաջինի վրա՝ *խախտված, ոտնահարած կամ վիճարկվող օրինական շահերի պաշտպանության նպատակով իրավասու մարմիններին դիմելը:* Համամիտ ենք Վ. Գրիբանովի հետ այն հարցում, որ քաղաքացու դիմումը պետական մարմիններին միշտ չէ, որ ենթադրում է իրավունքների պաշտպանության խնդրանք, այլ որոշ դեպքերում վերաբերում է դիմումատուի օրինական շահերի պաշտպանությանը¹²:

Չնայած այն հանգամանքին, որ «օրինական շահ» և «օրենքով պաշտպանվող (պահպանվող) շահ», ինչպես նաև «իրավական շահ» և «իրավաբանական շահ» բառակապակցությունները հոմանշային եզրեր ունեն, այնուամենայնիվ իրավաբանական գրականության մեջ որոշ հեղինակներ (Ե. Պ. Գոմին, Ա. Ն. Շայկենով) այն կարծիքի էին, որ հարկավոր է տարբերակել այդ տերմինները, քանի որ իրավական շահը իրավական վիճակի միջուկն է:

Ուշագրավ է այն փաստը, որ միջազգային իրավական ակտերը, ՀՀ Սահմանադրությունը, ընթացիկ օրենսդրությունը, դատական պրակտիկան չեն տարբերակում այդ տերմինները և կիրառում են որպես հոմանիշներ: Սակայն մեր ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն համոզման, որ իրավագետներից յուրաքանչյուրը օրինական շահերը դիտարկում է սուբյեկտիվ տեսանկյունից՝ այդ հասկացության մեջ ամրագրելով իր համար սուբյեկտիվ նշանակություն ունեցող գաղափարները:

Ա. Ն. Շայկենովը գրում է. «Իրավունքում արտացոլված բոլոր շահերը իրական պաշտպանության ներքո է: Հետևաբար, «օրենքով պահպանվող շահերը» ընդգրկում են ինչպես օրինական, այնպես էլ իրավաբանական շահերը, որոնք որքան էլ որ իրավաբանորեն կարգավորված են, սակայն ապահովված չեն սուբյեկտիվ իրավունքներով, նպա-

¹² См.у Грибанов В. П. Пределы осуществления защиты гражданских прав. М., 2002, էջ 278:

տակահարմար է անվանել «օրինական շահեր», իսկ այն շահերը, որոնք իրացվում են սուբյեկտիվ իրավունքների միջոցով, «իրավաբանական շահեր»¹³:

Նշենք, որ Ռ. Ղուկասյանի համար «օրինական շահ» հայեցակարգը գտնվում է տնտեսական, քաղաքական, իրավական սոցիալ-մշակութային շահերի հետ նույն հարթության վրա, քանի որ բոլոր շահերը ձևավորվում են հասարակական կյանքի պայմաններում և իրացվում են յուրահատուկ եղանակով¹⁴: Այստեղից եզրակացնում ենք, որ «իրավաբանական շահ» և «իրավական շահ» հասկացությունները ինչպես ծագումնաբանորեն, այնպես էլ կառուցվածքային իմաստով հոմանիշներ են, որոնք ներկայացնում են օրենքում կոնկրետ ամրագրված կամ դրանում արտացոլված շահը:

«Իրավական շահեր» և «օրենքով պաշտպանվող շահերի» եզրույթներն ուսումնասիրելիս տեսաբանները հաճախ դրանք դասակարգում են ըստ լայն և նեղ տեսակների՝ առանց հաշվի առնելու, որ մի կողմից՝ «իրավական շահը» լայն է «օրինական շահ» հայեցակարգից, քանի որ ընդգրկում է ինչպես օրենքով միջնորդավորված, այնպես էլ օրենքով պահպանվող շահը: Մյուս կողմից՝ տնտեսական շահը, որը իմաստով տարբերվում է իրավական շահից, կարող է լինել օրինական և երաշխավորված պետության կողմից: Չետևաբար, օրինական շահը, մնալով իրավական ոլորտում, իր բովանդակությամբ կարող է զանազանվել տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ տարատեսակ շահերից: *Այսինքն՝ օրինական շահը իր արտահայտման եղանակով (ձևով) իրավական է՝ լեգիտիմ, իսկ ըստ բովանդակության՝ բազմազան և տարաբնույթ: Չետևաբար, իրավական (իրավաբանական) և օրինական (օրենքով պահպանվող) շահերի միջև սահմանագիծ անցկացնելիս պետք է առաջնորդվել այն չափանիշներով (օրինական շահերի և սուբյեկտիվ իրավունքների արտահայտման եղանակը), որոնց շնորհիվ շահը անվանվում է իրավական: Այդ պատճառով էլ շահերի դասակարգումը «օրինական շահերի», «իրավաբանական շահերի» կամ «իրավաբանական նշանակության շահերի» ճիշտ չէ: Շահը միշտ հիմնական, առաջնային նշանակություն ունի, քանի որ ճանաչվում է պետության կողմից՝ հիմք ծառայելով ինչպես օրինական շահերի, այնպես էլ սուբյեկտիվ իրավունքների համար: Այսինքն, օրինական շահը իրավաբանական նշանակության շահն է, որը բխում է օրենքից և պաշտպանվում նրանով, սակայն կոնկրետ իրավական նորմերում չի ամրագրվում:*

Այստեղից եզրակացնում ենք, որ «իրավաբանական շահ» և «իրավական շահ» հասկացությունները ինչպես ծագումնաբանորեն, այնպես էլ կառուցվածքային իմաստով հոմանիշներ են, որոնք ներկայացնում են իր արտացոլումը կամ օրենքում կոնկրետ ամրագրում ստացած շահը:

Անձի հիմնական իրավունքները, ազատությունները, պարտականություններն ու օրինական շահերը անձի իրավական վիճակի միջուկը, հիմքն են, այն նվազագույն քանակը, առանց որի մարդը չի կարող հանդես գալ որպես քաղաքական և քաղաքացիական հասարակության լիարժեք անդամ: Այնուամենայնիվ իրավագետներից ոմանք անթույլատրելի են համարում օրինական շահերի ընդգրկումը անձի իրավական կարգավիճակի տարրերի մեջ՝ հիմնավորելով, որ օրինական շահը կայուն երևույթ է, և օժտված չէ իրա-

¹³ Տե՛ս **Шайкенов Н. А.** Категория интереса в Российском праве//Правоведение.1999, № 7, էջ 9,10-14:

¹⁴ Տե՛ս **Гуксян Р. Е.** Правовые и охраняемые законом интересы, М., 2006, էջ 116 : **Чечет Д. М.** Գնվ.աշխ., էջ 38:

վակարգավորիչ գործառնություն¹⁵: Ակնհայտ է, որ այդպիսի մոտեցումը միակողմանի է և չի կարող ամբողջությամբ հիմնավորել օրինական շահերի էությունը: Մեր կատարված ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք այն համոզման, որ անթույլատրելի է օրինական շահերի՝ որպես անձի իրավական կարգավիճակի կառուցվածքային տարրի անտեսումը: Իրավունքներ, օրինական շահեր, ազատություններ, պարտականություններ բազմաբովանդակ հասկացությունների ներդաշնակությունը կազմում են անձի իրավական կարգավիճակի միջուկը:

Մարդու և քաղաքացու օրինական շահերը մեծաթիվ են, բովանդակությամբ՝ խայտաբղետ: Այսպես, որոշ օրինական շահեր նպաստում են անձի հոգևոր կամ նյութական կարիքների բավարարմանը, մյուսները՝ երկրի քաղաքական կյանքի մասնակցությամբ: Այդ բոլոր օրինական շահերի ուսումնասիրությունը դյուրին դարձնելու նպատակով իրավաբանական գրականության մեջ ընդունված է դրանք դասակարգել ըստ որոշակի հատկանիշների:

Պետության և իրավունքի տեսություն մեջ լայն տարածում է ստացել անձի օրինական շահերի *ըստ բովանդակության* դասակարգումը երկու հիմնական խմբերի¹⁶:

Առաջին խումբը ներառում է *ընդհանուր օրինական շահերը*, որոնք բնորոշ են իրավունքի բոլոր ճյուղերին: Դրանք ընդգրկում են ինչպես ընդհանուր իրավական սկզբունքներից, այնպես էլ այն օրինական շահերից բխող շահեր, որոնք վերաբերում են անձի անօտարելի արժեքների, բարիքների, իրավունքների պաշտպանությանը (պահպանությանը):

Երկրորդ խումբը ընդգրկում է *հատուկ օրինական շահերը*, որոնք սահմանվում են օրենսդրության (իրավունքի) յուրաքանչյուր ճյուղում և բնորոշ են միայն տվյալ ճյուղին: Այսպես, կասկածյալի կամ մեղադրյալի շահը, որը բխում է քրեական դատավարության իրավունքով ամրագրված անմեղության կանխավարկածից, նրա այն շահագրվածությունն է, որ իրեն համարեն անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Չայտնի է, որ մարդը քաղաքացիական հասարակության անդամ է և կախված իր իրավական վիճակից՝ պետության հետ որոշակի հարաբերությունների մեջ է: Ուստի օրինաչափ է, որ ժողովրդավարական երկրներում լայն ճանաչում է ստացել օրինական շահերի դասակարգումը երկու խմբերի՝ 1) ֆիզիկական անձնաց օրինական շահեր, 2) իրավաբանական անձնաց օրինական շահեր:

Որպես քաղաքացիական հասարակության անդամ՝ բոլոր մարդիկ օժտված են պետություն կողմից նորմատիվ-իրավական ակտերով ճանաչված օրինական շահերով՝ անկախ նրանց տարիքից, ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններից: Ընդ որում, օրինական շահերը բնութթով ընդհանրական են, իսկ դրանցում ամրագրված անձի մղումները, նպատակները անհատական բնույթի են: Չետևաբար հասարակության ան-

¹⁵ Տե՛ս **Карташкин В. А.** Права человека: международная защита в условиях глобализации. М., Норма. 2009. С.43-47; **Лукашева Е. А.** Права человека. М., 2013, էջ 73; Նույնի, Социально-психологические аспекты реализации прав личности//Реализация прав граждан в условиях разжитого социализма, М., 1983, էջ. 51:

¹⁶ Տե՛ս **Витрук Н. В.** Основы теории правового положения личности в социалистическом обществе. М. Наука, 1979, էջ 147-160:

դամները համախմբվում են պետության ընդհանրական շահերով, իսկ նրանցից յուրաքանչյուրն իր հերթին օժտված է անհատական ձգտումներից, պայմաններից ծագած անձնական օրինական շահերով: Իրավաբանական անձի դեկլարությունն իր հերթին պարտավոր է իրականացնել իր անդամների, աշխատակիցների օրինական շահերի պաշտպանությունը՝ նախօրոք ներկայացնելով առկա վերապահումները կազմակերպության կանոնադրության մեջ: Ավելին, իրավաբանական անձը ընդհանուր և մասնավոր օրինական շահերի պաշտպանության նպատակով նույնիսկ կարող է վերակազմավորվել:

Նշենք, որ իրավաբանական գրականության մեջ օգտագործվող «քաղաքացու օրինական շահեր» արտահայտությունը չի նշանակում, որ օրինական շահերը պատկանում են միայն տվյալ պետության քաղաքացիներին, կամ որ պետությունը ճանաչում և պաշտպանում է միայն իր քաղաքացիների օրինական շահերը¹⁷: Օրինական շահերը պատկանում են ինչպես տվյալ պետության քաղաքացիներին, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձնանց: Կարևոր է, անձի շահերը համապատասխանեն տվյալ պետության իրավական նորմերին (լինեն լեգիտիմ) և լինեն օրինական (լեգալ):

Ըստ կարևորության աստիճանի՝ օրինական շահերը դասակարգվում են սահմանդրական օրինական շահերի և այլ նորմատիվ-իրավական ակտերում ամրագրված օրինական շահերի:

Հարկ է նշել, որ պետության իրավական համակարգը կազմող բոլոր իրավական նորմերը, ելնելով դրանց իրավաբանական ուժից, այն ընդունող մարմնի գրաված տեղից պետական մարմինների համակարգում, բաժանվում են երեք հիմնական խմբերի՝ օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր, միջազգային ակտեր:

Պետության ողջ իրավունքի համակարգի, բոլոր օրենքների բուրգի գագաթում Սահմանադրությունն է, իսկ նյութ օրենքներն ու ենթաօրենսրական ակտերը չպետք է հակասեն Սահմանադրությանը: Հետևաբար, ՀՀ Սահմանադրությունը ամրագրում է հասարակության ամենակարևոր, էական իրավունքներն ու շահերը, որոնք իրենց զարգացումն ու հստակեցում են ստանում ճյուղային, ընթացիկ օրենսդրությունում: *Սահմանադրական օրինական շահերը* շոշափում են անձի արժանապատվությունը, անձնական կյանքի անձեռնմխելիությունը, անձնական կամ ընտանեկան գաղտնիքը, բժշկական սպասարկման որակը, որոշակի տեղեկատվության ստեղծում ու տարածումը և այլ իրավունքներն ու կյանքի ոլորտները, որտեղ հանդես են գալիս օրինական շահերը: Անհրաժեշտ է ընդգծել, որ օրինական շահերի այդպիսի դասակարգումը չի նշանակում, որ Սահմանադրության մեջ տեղ գտած օրինական շահերը իրենց նշանակությամբ գերական են այլ օրենքներում, ենթաօրենսդրական ակտերում նշված շահերից: Սահմանադրությունը պարզապես ընդգրկում է հասարակության համար առավել էական նշանակություն ունեցող իրավունքներ և օրինական շահերի ամբողջությունը: Շարունակելով դասակարգումը՝ հավելենք, որ կան օրինական շահեր, որոնք իրենց անմիջական ամրագրում են գտնում նորմատիվ-իրավական ակտերում, և օրինական շահեր, որոնք ամրագրված չեն ընթացիկ օ-

¹⁷ Տե՛ս **Малько А. В.** նշվ.աշխ.. էջ 102, **Чечет Д. М.**, նշվ.աշխ.. էջ 39; **Байтин М. И.** *Сущность права (современное нормативное правопонимание на грани двух веков)*. Саратов. 2001, էջ 81-89; **Галенская Л. Н.** *Правовое положение иностранцев в России*. М., 2006, էջ 33; **Шайкенов Н. А.**, նշվ.աշխ., էջ 14:

րենսդրությամբ, սակայն համապատասխանում են օրենդրության ընդհանուր հիմքերին: Առաջինի վառ օրինակ է երեխաների շահերի պաշտպանությունը ծնողների ամուսնալուծության ժամանակ, իսկ երկրորդի՝ բուհի շրջանավարտի օրինական շահը՝ իր մասնագիտության համապատասխան աշխատանք ձեռք բերելու:

Իրավաբանական գրականության մեջ կարելի է հանդիպել օրինական շահերի այլ դասակարգումներ, որոնք անմիջականորեն պայմանավորված են առարկայի հետազոտման նպատակով և հեղինակների սուբյեկտիվ մոտեցումներով:

Վերոգրյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ «անձի օրինական շահեր» հայեցակարգը իրավաբանական, սոցիալական և քաղաքական բարդ երևույթ է, որը պրակտիկայում կարող է կյանքի կոչվել այնտեղ և այն չափով, որտեղ և որ չափով անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի հաստատումը պետական քաղաքականության առանցքային խնդիր է: Այդ դեպքում անձի օրինական շահերը՝ որպես անձի իրավական կարգավորման միջուկ, բացահայտում են տվյալ հասարակությունում անձի իրավունքների և օրինական շահերի իրացման և պաշտպանության աստիճանը: Օրենսդիրն իր հերթին պետք է մեծ ուշադրության արժանացնի հասարակության անդամների շահերի ձևավորման գործընթացին: Կարևորագույն շահերը պետք է ամրագրվեն նորմատիվ-իրավական ակտերում՝ որպես օրինական շահեր, որոնք երաշխավորում են որոշակի սոցիալական բարիքներից օգտվելու իրավունքը և դրանց պաշտպանության նպատակով իրավունք վերապահում դիմելու իրավասու պետական մարմիններին: Հետևաբար, անձի օրինական շահերի փոխկապակցվածությունը անձի սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների հետ նպաստում է նոր սուբյեկտիվ իրավունքների և իրավաբանական պարտականությունների ձևավորվածանը:

MODERN INTERPRETATIONS AND CLASSIFICATIONS OF THE CONCEPT “LEGAL INTERESTS OF THE PERSON”

Lilit Kazanchian

Institute of philosophy, sociology and law

The author based on the study of materials from the history of legal conception of Armenia and the post-communist countries, reveals socio-legal meaning and essential role of “legal interests” in formation of “legal status of the person”. Moreover, the article discloses the diversity of interpretations, classifications of the person's legal interests (its core elements), in the context of legal theory. The author emphasizes the relationship between the concept of “legitimate interests” and “judicial interest”.

СОВРЕМЕННЫЕ ТРАКТИРОВКИ И КЛАССИФИКАЦИИ ПОНЯТИЯ ЗАКОННЫХ ИНТЕРЕСОВ ЛИЧНОСТИ

Казанчян Лилит

аспирантка института Философии, социологии и права НАН РА

Автор данной научной статьи на основе изучения материалов из истории правовой мысли Армении и постсоветских государств рассматривает фундаментальное, социально-юридическое значение понятия законных интересов личности в формировании правового статуса личности. В частности, раскрывается разнообразие трактовок законных интересов личности, его структурных элементов, правоведами в контексте теории государства и права. Одновременно, подчеркивается взаимоотношение понятий “законные интересы” и “юридические интересы”, а так же отмечается разнообразие квалификаций законных интересов личности.

Բանալի բառեր – օրինական շահեր, իրավաբանական շահեր, իրավական կարգավիճակ, իրավունքներ, ազատություններ, պարտականություններ:

Key words: legal interest, judicial interest, human rights, liberties, obligations, legal status.

Ключевые слова: законные интересы, юридические интересы, права личности, свободы, обязанности, правовой статус личности.